ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 57-Ա

«06» հուլիսի 2022 թվականի գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԱՄԱՍԻԱՅԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԱՄԱՍԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԱԿՏԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԱՄԱՍԻԱՅԻ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի, 65-րդ հոդվածի 2-րդ մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանին՝

Որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ամասիայի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ամասիայի համայնքային գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության միաձուլման միջոցով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ամասիայի մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպմամբ պայմանավորված՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ամասիայի մանակապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության գույքի, այլ գույքային իրավունքների, ինչպես նաև պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր (ներառյալ՝ վիճարկվող) պարտավորությունների Հայաստանի

Հանրապետության Շիրակի մարզի «Ամասիայի մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության փոխանցման ակտը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ամասիայի համայնքային գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության գույքի, այլ գույքային իրավունքների, ինչպես նաև պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր (ներառյալ՝ վիճարկվող) պարտավորությունների Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ամասիայի մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության փոխանցման ակտը:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ամասիայի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ամասիայի համայնքային գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության միաձուլման միջոցով՝ վերակազմակերպված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ամասիայի մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության գործունեության առարկան և նպատակները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 8 Դեմ՝ Ձեռնպահ

Հարությունյան Ջ.
Ղուկասյան Ա.
Ախցխեցյան Է.
Վարդանյան Ա.
Աբրահամյան Ն.
Հարությունյան Վ.
Արսենյան Ջ.
Գևորգյան Հ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«06» հուլիսի 2022 թվական
գյուղ Ամասիա